

Ս.Մ.Ա.Վ.ԵՐԶԻ ՀԱՆԳԻՒՄՆԵՐ Ս. ԱԹՈՌՈՅ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ա. — Ս. Թարգմանչաց Մանկապարտեզի

Կիրակի, 6 Յուլիսի 4. Վ. Ժամը 3.30ին, Ժառանգ. Վարժարանի բակի հինաւուրց մայրիկն ներքև հաստատուած շարժական բնմին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Մանկապարտեզի ամալերջի հանդէսը՝ նախադասութեամբ Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ժողովուրդի բազմութեան:

Մէկ ու կէս ժամերու ընթացքին, Մանկապարտեզի փոքրիկները յաջորդաբար և յաջող կերպով կատարեցին արտասանութիւններ (հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով), երգեր, պարեր, մարզանքներ, և այլն, որոնք ի յայտ կը բերէին վարժարանի Տեսութեան հոգածութեան ու Մանկապարտեզի ուսուցչական կազմին տարուան մը նուիրեալ ու խնամքոտ աշխատանքին արգասիքը:

Հանդէսի աւարտին, Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարքը բաժնեց Մանկապարտեզի 32 ընթացաւարտ փոքրիկներուն վկայականներ, և տալէ ետք անոնց իր պատուովն ու օրհնութիւնը փակեց հանդէսը «Պահպանիչ»-ով ու Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:

Բ. — Հիւրուհան Ս. Վարժարանի, Ամման

13 Յուլիս, Կիրակի առաւօտեան ժամը 10ին, Ամմանի Բէքա Սինէմային մէջ կատարուեցաւ տեղւոյն Հիթուհան ազգային երկսեռ վարժարանի ամալերջի հանդէսը՝ նախադասութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպո. Քէմհանեանի, Կերկայ էր խուան բազմութիւն ժողովրդեան:

Հանդէսը տեւեց աւելի քան երեք ժամեր, որոնց ընթացքին հանդիսականները վայելեցին վարժարանի աշակերտութեան կողմէ եղած պարերը, երգերը, արտասանութիւններն ու սուրբնները: Վարժարանի Տեսուչ Հոգ. Տ. Անուշահան Վրդ. կարգաց վարժարանի միամեայ գործունէութեան տեղեկագրերը Ապա, Գեր. Նախագահ Ս. Հայրը կատարեց Նախկին վարժարանի 6 և Մանկապարտեզի 19 շրջանաւարտներու վկայականներու և յաջող աշակերտներու մրցանակներու բաշխումը ու իր փակման խօսքէն ետք տուաւ իր օրհնութիւնը վարժարանի ուսանողութեան:

Գ. — Ս. Թարգմանչաց Նախակրթարանի և Երկրորդական Բաժնի

Նոյն երեկոյեան ժամը 6.30ին, Ժառ. Վարժարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Ս. Թ. Նախակրթարանի և Երկրորդական Բաժնի ամալերջի հանդէսը՝ նախադասութեամբ Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հօր, Կերկայ էր բովանդակ Միաբանութիւնն ու ծնողներու և ժողովուրդի հոծ բազմութիւն:

Հանդէսը սկսաւ ընթացողութեամբ Ս. Թարգմանչաց շարականի երգեցողութեամբ, որմէ ետք իրագործուեցաւ աւելի քան երկու քու կէս ժամերու տեսութեամբ ճոխ յայտագիր մը: Երկրորդական Բաժնի ընթացաւարտներէն ոմանք բանաստեղծեցին, իսկ սուրիշներ կարգացին ինքնազիր շարագրութիւններ, հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով, նոյն լեզուներով եղան նաև արտասանութիւններ, կատարուեցան նոյնպէս խմբերգներ՝ ղեկավարութեամբ Պր. Սահակ Գալայանեանի, ինչպէս նաև խմբական արտասանութիւն: Հանդէսի երկրորդ մասին շրջանաւարտներու կողմէն երգուած ընթացիկ երգէն և կարգացուած սուրբնէն ետք, Տեսուչ Հոգ. Տ. Կիրակ Վրդ. կարգաց վարժարանի միամեայ գործունէութեան Տեղեկագիրը՝ զոր պրիմէ ամբողջութեամբ կուտանք ստորև:

«1957-1958 դպրոցական տարեփակի հանդիսաւոր այս պահուն Ձեզ կը ներկայացնեմ տեղեկագիրը մեր դպրոցական մէկ տարուան կրթական աշխատանքին, զոր աշխատեցանք կարելի չափով արդիւնաւոր ընծայել:

Առակներսըլն: — 1957 Հոկտ. 1ին վերաբացուեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանը, 370 երկսեռ աշակերտներով, որոնց 183ը մանչեր, իսկ 187ը աղջիկներ էին: Այս թիւէն 53ը — 37 աղջիկ և 16 մանչ — հետեւեցան մեր երկրորդական կարգերու դասընթացներուն, 246ը — 126 մանչ և 120 աղջիկ — Նախակրթարանի դասընթացներուն, իսկ 71ը — 41 մանչ և 30 աղջիկ — Մանկապարտեզի դասընթացներուն: Աշակերտութեան թիւին զգալի պակասը նախորդ տարիներէն արգիւնք է երուսաղէմեանի ժողովուրդի կարեւոր թիւով գաղթին ղէպի Ամերիկա և կամ այլուր:

Ուսուցչական կազմ: — Այս տարի մեր ուսուցչական կազմին թիւն էր 30: Անոնցմէ ութը Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամ եկեղեցականներ են, որոնք կը ծառայեն անվարձ ու յօշոտակամ սիրով:

Գնահատանքի խօսք ունիմ միայն մեր սիրելի ուսուցիչներուն համար, բոլորն ալ որակաւոր, ազնիւ, զոհաբերող ու նուիրուած, որոնց բարինամագործակցութիւնը մեր կրթական գործի վերելքին մէջ ունի իր աջաօտ տեղն ու զիրքը:

Կրթական - ուսումնական: — Հրճուանքի զգացումներով միայն կրնանք արձանագրել որ այս երկրորդ տարին է որ իր լրումին հասած է մեր երկրորդական վարժարանի ծրագրին իրագործելի կարգական վարժարանի ծրագրին իրագործումը: Մեր ուսումնասէր բայց նրթական միջոցներէ զուրկ աշակերտները Նախակրթարանի շրջանը աւարտելէ յետոյ այլևս չունին անուսմունք մնալու մտահոգութիւնն ու տառապանքը:

ինչ որ եղաւ՝ մեր շրջանէն շատերուն համար Տարուէ տարի նշանակալից կերպով կը շատնայ թիւը մեր Երկրորդական վարժարանի աշակերտներուն ու կարգերը կը ստանան հետզհետէ աւելի հաստատուն և յստակ դիմադրի՞ծ ու ձև։

Թէ՛ անցեալ և թէ՛ այս տարի, մեր Երկրորդական կարգերու շրջանաւարտները մասնակցեցան նաև Անգլիական G. C. E. ի (General Certificate of Education) քննութեան։ Անցեալ տարուան մասնակցողները յաջողեցան հետևեալ նիւթերուն մէջ. — Հայերէն, Արաբերէն, Թուրքարեան լեզու, Գրականչիւ և Երկրաչափութիւն։ Իսկ այս տարի մեր Երկրորդական կարգերուն տուած 8 շրջանաւարտներէն եօթը՝ մասնակցեցան նոյն քննութեան։ Արդիւնքը յայտնի կ'ըլլայ Սեպտեմբերին։

Նախակրթարանն ու Մանկապարտէզը նմանապէս եղան մեր խնամքին և ուշադրութեան առարկան. մեր կարելին ըրած ենք որպէսզի մեր աշակերտներուն համար զպրոցը ըլլայ փնտռուած շրջանակ մը, իսկ մեր ուսուցումները որքան կարելի է դիւրամատչելի և սիրելի։

Այս տարի կրկնապատիկ ընդարձակեցինք մեր գիտական դասերու յատուկ տարրալուծարանի դարձիքներու հաւաքածոն, ու յառաջիկայ տարույն ընթացքին նախատեսուած 'կրկնապատիկ նոր ընդարձակումի համար արդէն իսկ կատարած ենք նոր պայպրանք։

Մանկապարտէզը հոխացուցինք մանուկներուն սիրելի մանկավարժական նորութիւններով ու խաղալիքներով, որոնք պիտի դիւրացնեն մանուկներու դաստիարակութիւնը։ Յարմարուած համար տեղւոյն կառավարական և այլ զպրոցներու կրթական դրութեան, ինչպէս նաև մեր զպրոցէն ներս ուսումնական տարեշրջաններուն աւելի լաւ դասաւորութիւն մը ըրած ըլլալու համար, Մանկապարտէզի Ծաղիկ դասարանը, որուն կրթական մակարդակը անցեալ տարիներուն հասցուցած էինք Նախակրթարանի Ա. դասարանի կրթական մակարդակին, այս տարի դասաւորեցինք Նախակրթարանի կարգին որպէս Առաջին դասարան։ Այս հասկացողութեամբ ալ Երկրորդը կոչուեցաւ Երրորդ և այսպէս շարունակաբար մինչև 2. դասարան որ կոչուեցաւ Երկրորդական Ա. դասարան, և որ ունի Երկ. Ա. դասարանի մը անհրաժեշտ կրթական մակարդակը։ Այս փոփոխութիւններով, մեր Երկրորդական բաժինը ունեցաւ հինգ կարգեր, մինչ Մանկապարտէզն ալ տարի մը զեղչուելով ունեցաւ երկու կարգեր միայն։ Այս դրութեամբ, նոր աշակերտներուն վարժարան ընդունելութեան տարիքն ալ վերածուեցաւ 4էն 5ի։

Թէ՛ Նախակրթարանի և թէ՛ Երկրորդական վարժարանին մէջ ուսուցութեան երեք լեզուներ. Հայերէն, Արաբերէն, Անգլերէն։ Այս տարի ստիպուեցանք Ֆրանսերէնը զանց առնել, մեր մեծանաւորուած կրթական ծրագիրը թեթեւեղութեամբ ստանձնողութեամբ միայն, կրնանք ըսել որ լեզուներու ուսուցումը իր բարւոք ընթացքին մէջ է, ոչ միայն Այս ուղղութեամբ թափուած անխոնջ

աշխատանքներուն շնորհիւ, այլև այն պատճառաւ որ մեր ուսուցչական կազմէն ալ կարևոր թիւ մը կը բաղկանայ օտարներէ ու մեր աշակերտները ստիպուած են ունենալ օտար լեզուներու վարժութիւն։

1958 Յունիս 24-Յուլիս 2 տեղի ունեցան մեր ամառային քննութիւնները։ Մեր 370 աշակերտութեան 330ը յաջողութեամբ կը փոխեն իրենց դասարանները, մինչ 40 աշակերտներ կը կրկնեն իրենց դասարանները, կրթական մարդիկ մէկ իրենց անբաւարար աշխատութեան պատճառաւ։ Մտաէն հետեւեցանք ու հսկեցինք մեր կրթական ծրագրի լաւագոյն իրագործման, տարուայ ընթացքին քանիցս քննութիւնէ անցուցինք բոլոր դասարաններու բոլոր աշակերտներու պարտականութիւնները, մեր նշմարած թերութիւնները գրաւորապէս յանձնեցինք ուսուցիչներու ուշադրութեան։

Մեր կրթական ծրագրին որպէս օժանդակ այս տարի սկիզբը դրինք զպրոցական գրադարանի մը, որ նետզհետէ պիտի ճոխացնենք։ Առոր յարակից կերպով կրնանք յիշել որ արժարժեղու համար հայերէն մշակոյթին, պատմութեան ու հաւատքին սէրը, պատրաստել տուինք բազմաթիւ նկարներ, ազգային նշանաւոր դէմքերու, դէպքերու, զրագէտներու, գործիչներու, հայ արուեստի արժէքաւոր կոթողներու, հայրենի քաղաքներու և շէնքերու, որոնք յատուկ դասաւորումով մը պիտի զարդարեն մեր զպրոցի պատերը։

Ազի, բարոյակաճ ու կրօնակաճ դասխարակութիւն. — Ինչ որ մեր զպրոցական ծրագրին և ձգտումներուն ամենէն էական և ամենէն դժուար իրագործելի մասն է։ Հայ մարդ, բայց լաւ մարդ, ահա մեր նշանաբանը։

Հայ մարդ, բայց մանաւանդ լաւ մարդ, լաւ բրիտանեայ մարդ, կրօնական ու բարոյական առողջ դաստիարակութեամբ օժտուած։ Այս նպատակաւ բոլոր դասարաններու համար ունինք շարաթական քանի մը պահ կրօնքի դասը։ Մեր աշակերտները ամէն կիրակի և այլ տօնական առիթներով մեր առաջնորդութեամբ յաճախեցին եկեղեցի, ու յաճախ և այս տարի ամենէն աւելիով, անոնք մասնակցեցան եկեղեցական արարողութեանց։ Առ այս մեզի համար մեծ գիւրբութիւն մը եղաւ Գեր. Լուսարարապետ Ս. Հօր կարգադրութեամբ 70 եկեղեցական նոր շապիկներու շինութիւնը, որով մեր աշակերտները լայն կարելիութիւնը ունեցան մասնակցելու եկեղեցական հոգեպարար արարողութիւններուն։ Զարկ տուինք նոյն ատեն հոգեոր երաժշտութեան ուսուցման։ Ս. Զատկի, Ս. Իննգեան և Թարգմանչաց զոյգ տօններուն առիթներով, տարին չորս անգամ, մեր աշակերտները մասնակից եղան Ս. Հաղորդութեան Խորհուրդին։ Մեր հրաւերով նոյն հոգեպարար շնորհքին արժանացան նաև օտար Երկրորդական վարժարաններու հայ աշակերտները։

Ընդհանուր գոհունակութեան խօսք ունիմ մեր վարժարանի աշակերտութեան վարք ու բար-

քին չուրջ, մանաւանդ երբ բազմաթիւ թիւեր կը գնենք այլ զպրոցներու աշակերտութեան հետ, մերինները կը գտնենք ըկարագրով, վարքով ու բարքով շատ աւելի օրինակելի: Եւ արժանիքի փաստ մըն է մեր աշակերտութեան համար եթէ ըսեմ որ մեր պաշտօնավարութեան եօթը տարիներու ընթացքին ոչ մէկ ուսանողի վտարում ունեցած ենք, ոչ միայն անոր համար որ մենք անձնագէտ ալ երբեք չենք փախաբան զայդ, այլեւ մեր տղաքը իրենց ընթացքով տեղի չեն տուած նմանօրինակ պատժներու իրագործումին:

Մարզական կեանք: — «Առողջ հոգի առողջ մարմին» մէջ՝ կ'ըսէ զասական առածը: Մեր աշակերտներու մտաւորական և հոգեկան դաստիարակութեան հետ ոյժ տու ինքնակ անոնց ֆիզիքական դաստիարակութեան: Մարզանքը մաս կը կազմէ տղոց ամենօրեայ ժամանակացոյցին. այս տարի նոյն սկզբունքը առաջին անգամ ըլլալով կիրարկեցին նաև աղջիկներու համար:

Տարուս ընթացքին տղաք բաժնուած Ազուս, Արուս և Մոսիս անուններով երեք մարզական խումբերու, իսկ աղջիկները Աւան, Երեւան և Անի անուններով երեք այլ խումբերու, կատարեցին իրենց մարզական վարժութիւնները, Ֆուրպոյի, Վոյիպոյի և Պասէրպոյի միջխմբական մրցումները, ինչպէս նաև ունեցան հետեւեալ մրցումները հայկական և օտար կազմակերպութիւններու հետ, հետեւեալ պատկերով. — Ֆուլթոյի 6 մրցումներէն 5ը ի նպաստ վարժարանիս, Վոյիպոյի 5 մրցումներէն 3ը ի նպաստ վարժարանիս, Պասէրպոյի 3 մրցումներէն 1ը ի նպաստ վարժարանիս, Փինկ-փունկի 3 մրցումներէն 2ը ի նպաստ վարժարանիս:

Մեր տարեկան Դաշտահանդէսը, մասնակցութեամբ մեր տղաքներուն և աղջիկներուն, տեղի ունեցաւ 8 Յունիս 1958ին, նախագահութեամբ Անն. Տ. Տիրան Ս. Արքեպիսկոպոսի, ժառանգ. վարժարանի գաշտին վրայ. ու այս առթիւ մեր աշակերտները լաւագոյն կատարումով մը ցուցադրեցին իրենց տարուան մը մարզական աշխատանքին հանդէսը՝ որ յամենայնիւ կը գերազանցէր նախորդ տարիներունը:

Արեւոյեցներ և Սիլուսեցներ Ս. Թարգմանչաց Վարժարանի: — Մեր Սկաուտներու և Արեւոյեցներու կազմակերպութիւնը կը գտնուի իր յառաջդիմական ընթացքին մէջ. անոնք ամէն շաբաթ կ'ունենան իրենց կանոնաւոր դասախօսութիւններն ու խորերը: Իրենց համար խանդավառութեան առիթ մը եղաւ անցեալ ամառնային զարթոյցական արձակուրդին մեր կողմէ կազմակերպուած եօթն-

օրեայ բանակումը՝ Պարոնտէրի ամառանոցին մէջ: Կարգ մը արգելիչ պատճառներով թէև զանգաղ՝ բայց յամառօրէն կ'ունենայ թիւք մեր Սկաուտներուն, որ տարուս ամառնային հասած է 20ի, իսկ Գայլիկներուն թիւք՝ 3: Իսկ մեր Արեւոյեցներուն թիւն է 40, Արժուիկներունը՝ 60: Տարուս ընթացքին մեր կողմէ ամբողջացան թէ՛ Արեւոյեցներու և թէ՛ Սկաուտներու համագործակցութեան Սկաուտներու Ս. Արեւոյեցներու համագործակցութեան, իսկ Սկաուտայնոր՝ Պր. Պողոս Արքայապետեան:

Չեւագործային աշխատանք և Տարեկան Պագար Ս. Թարգմանչաց Վարժարանի: — Ուսանող ու հիւներուն համար ունենք ամենօրեայ ձեռագործական աշխատանքներու պահեր. ու այս մարդին մէջ մեր վարժարանը արձանագրած է նշանակելի յառաջդիմութիւն, ինչ որ լայն գնահատանքի առարկայ եղած է միշտ ալ: Ույն ձեռագործները յօգուտ վարժարանիս վաճառքի դրուեցան մեր տարեկան Պագարին՝ որ տեղի ունեցաւ 1958 Մայիս 31 Երեւան և Յունիս 1 կիրակի երկու օրերուն, և ուրուն իրենց գործնական լայն մասնակցութիւնը բերին մեր ուսուցչական կազմը ու նշուածուած մանայ խումբ մը օրիորդներ և տիկիւններ: Այս առթիւ ունեցանք նաև մեր գաղութէն նուիրատուներու խումբ մը, որոնց բոլորին կը յայտնենք մեր շնորհակալութիւնները: Իսկ թէ՛ ընկերային և թէ՛ անտեսական տեսակէտներէ մեր Պագարը եղաւ յաջողութիւն մը, որովհետև մեր գաղութին բոլոր անդամները մեր զարթոյցական յարկին տակ առիժը ունեցան լաւագոյն ընկերային հանդիպումի մը, իսկ մեր զարթուած աշակերտներու 336 Յորդանանեան Տիւարի զուտ շահ մը:

Հայ Արտեսի Յուշանմուտ: — Օգտուելով մեր տարեկան Պագարի առիթէն, կազմակերպեցինք նաև Հայ Գրչագրական և Ճարտարապետական արուեստներու ցուցահանդէս մը, մօտ 120 ցուցանար և միագոյն լուսանկարներով, իւրաքանչիւրին մանրամասնեալ բացատրութիւններով միասին: Իր ժամանակին սոյն ցուցահանդէսը մեծ նետաքրքրութիւն ստեղծեց մասնաւորաբար օտար և ձեռնհաս շրջանակներու մէջ, որոնք քանիցս խնդրեցին կրկնել այս ցուցահանդէսը: Միտք ունինք մօտ ապագային աւելի ընդարձակ ծրագրով կրկնել սոյն ձեռնարկը:

Տնտեսական: — Մեր զարթոյցական կրթական ծրագրին զուգընթաց ընդարձակուած է նաև մեր ծախսեց զուտը: Այստեղ կուտանք ընդհանրապէս մեր տարեկան եկամուտին, քաղելով Ս. Արժուսիս ելեմտիք Տեղութեան հաշուի տեսակներէն, 1957 Մայիս 14ն մինչև 1958 Ապրիլ 30:

Ե Լ Բ

Ամսական պատճեններու	4242.000
Պագարի և ձեռագործի ծախք	240.580
Հանդէսներու ծախք	53.510
Վանառեյի գրեմականք	642.720
Տարալուծարանի գործիքներու և stencil մեքենայի մը գնման	100.750
Մանր ծախք, գրեմականք և նորագ.	266.540
Սկաուտներու գգեսուտ	20.390
	5566.490

Ե. Տ. Յիլի

4242.000
240.580
53.510
642.720
100.750
266.540
20.390
5566.490

Մ Ո Ւ Տ Ք

Ռեակիբրաց բուսիներէ
Վանառուած գրներէ
Պագարէն եւ ձեռագործներէն
Հանդէսներէ եւ ֆոարքներէ
Նուիրատուութիւններէ(*)
Ծախսոց առաւելութիւն վճարեալ Ս. Սրուէն

Թ. Ց. Յիւս
895.300
677.260
487.010
103.930
3134.336
5297.836
218.654

Ինչպէս կը տեսնէք, մեր մուտքին կէսէն աւելին գոյացած է նուիրատուութիւններով, 3134 տինար: Այս գումարը արդիւնք է մեր կողմէ կատարուած բազմաթիւ թղթակցութիւններուն ու յամառ աշխատանքին:

Բարեբաւեր: - Այս աշխատանքով մենք կը բացած ենք մեր զգրոցական գործին վրայ հրաւիրել ուշադրութիւնը կրթասէր և ազնիւ այն բոլոր հայերուն՝ որոնց սրտին զանրը միշտ բաց

եղան յանուն մեր սիրելի մանուկներուն և յանուն անոնց կրթական գործին մեր կոչերուն: Ազնիւ հայեր՝ որոնք իրենց արդար աշխատանքէն բաժին մը հանեցին նաև հայ մշակոյթի գործին ու մեզ կարելիութիւնը տալին կրթական աջքսուս նուանուիներու: Ստորե կատանք մէկ առ մէկ անունները այդ բոլոր նուիրատուներուն և նուիրատուութեանց քանակը:

1957

Օգոս. 28. - Տիկին Աբոյօնիա Սողիկեան, Շիրակո
» » Տիար Պետրոս Զօզանեան, Ռէյսին
» » » Վ. Էղոյեան, Սարբամկնթօ
Սեպտ. 1. - » Գրիգոր Պարոնեան, Լոս Անճելլոս
» » » Արմի Աւետեան, Ֆրէզնօ
» » Տիկին Լուսին Կիւրիկեան, Ֆիլատելֆիա
» » » Լիլի Գասպարեան, Սարբամկնթօ
» » Mr. & Mrs. Club, Բասասէնա
» » Բասասէնայի Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւն
» » Օրիորդ Պէրա Նանտեան, Նորթ Պլիմպթօն
» 30. - Կիւլապի Կիւլպէնկեան Հիմնադրութեան
Նոյեմ. 1. - Տիար Արա Եարսով, Նիւ Կորր
Դեկտ. 12. - Այնբապի Հայրենակց. Միութիւն, Ամերիկա
» » Տիար ձօրն Պէյրեան, Տիթթոյթ
» » Տէր եւ Տիկին Բ. Ասլանեան, Շիրակո
» » Բիւքանոյ Հայր. Վեր. Միութիւն, Ամերիկա
» » Տիար Թադէոս Թէմուզեան, Եղեմ
» » UNRWATԷն
» 31. - Mr. & Mrs. Club, Բասասէնա
» » Տիար Զաւի Աբրահամեան, Բասասէնա
» » » Գառնիկ » »
» » » Սեմիան Փիլիպպոսեան, Ֆիլատելֆիա
» » Տիկին Վ. Նետրեան, » »

Յորդանանեան Տիւար

9.000
18.000
9.000
9.000
9.000
9.000
9.000
9.000
9.000
9.000
360.000
9.000
19.000
18.000
9.000
43.000
9.500
320.000
18.500
9.200
9.200
38.500
38.500

1958

Յունիւ. 2. - Տիար Արսաէս Օսապաեան, Ֆիլատելֆիա
» 23. - Տիկին Մէօնիպէ Թիմուր, Լոս Անճելլոս
» 1st Congr. Church Ladies (Wellesley)
Փետր. 1. - Տիար ձիվան Դարակեօզեան, Ֆրէզնօ
» 2. - Հայ Կարօս Ռասմոյնեան Ամերիկանոյ Բարեկամ Եր
» 6. - UNRWATԷն
» 13. - Տիար Զարլի Աշեան, Ռիչմօնտ
» 22. - Կրտսեր Տիկնանց Միութիւն, Ֆիլատելֆիա
» 23. - Տիար Սեդրաք Ռալֆանեան, »
» Օրիորդ Համեսուհի Ամէքնեան, Թուլարի
» Տիկին Թումանեան, Լոս Անճելլոս

(*) Այս նուիրատուութիւններուն մէկ մասը, նուիրատուներու անուններով միասին երկրպագած են մեր նախորդ տարուան Տեղեկագրի ցուցակներուն մէջ:

1958

Յարդանեան Տիւար

Ապրիլ 29. — Տիար Աղաթի Ալվագեան, Սարրամէնթօ	9.050
» » » ձան Օհաննէսեան, Յրէզնօ	9.050
» » Տիկին Մ. Միխայէլեան, Պոսթոն	9.050
» » » Ովսաննա Տէր Յակօբեան, Պոսթոն	9.050
» » Mrs. H. A. Collins, Օրլէնս	9.050
» » Տէր Էս Տիկին Աւետիս Սուտեան, Նիւ Եորք	9.050
» » Տիար Սիմօն ձինկէօզեան, Տիթթոյթ	9.050
» » Տիկին Սրբունի Պետկեան, Նիւ Եորք	9.050
» » Տիար Սիմօն Շմաւոնեան, Նիւ Եորք	9.050
» » Տիկին Ս. Լ. Յակօբեան, Յրէզնօ	36.000
» » » Աբօյօնիա Սողիկեան, Շիրակօ	9.050
» » » Թագունի Դանիէլեան, Պոսթոն	9.050
» » Տիար Արցի Աւետեան, Յրէզնօ	9.050
» » » Ա. Բարիջանեան, Ռիտլի	9.050
» » Օրիորդ Զարուհի Աղանեան, Էվընսթըն	9.050
» » Տիկին Լիլի Գասպարեան, Սարրամէնթօ	9.050
» » Տիար Արա Էարսըմ, Նիւ Եորք	9.050
» » Տիկին Սարենիկ Տէր Գալիթեան, Քլիվլէնս	8.500
» » Տիկին Հայասան Պէլքըր, Յրէզնօ	8.500
» » Տիթթոյթի Հայ Վերեաններու Միութիւն	17.500
Մայիս 15. — Հասարակական Հիմնադրութիւն (Օր. Լ. Գարակէօզեանի միջոցաւ)	302.000
» » Տիկին Կիլի Ալվագեան, Նիւ Եորք	7.240
» » » Սառա Խոլիկեան, Պոսթոն	9.050
» 31. — Տօքթ. Մ. Յակօբեան, Յիլասէլֆիա	9.000
» » Տիար Պետրոս Զօպանեան, Ռէյսիւն	18.000

Այս առթիւ կ'ուզենք ընել հետեւեալ յիշատակութիւնները: Ինչպէս կը տեսնէք, մեր մեծագումար նուիրատուներու կարգին կուգան. —

Հասարակական Հիմնադրութիւնը: — Որ տարեկան 1000 տոլարի շարունակական նուիրատուութեամբ կը պահէ մէկ ամբողջական դասարան մը կարգադրեցինք որ, յետ այսու, մեր երկրորդական Բ. դասարանը նկատուի Հասարակական Հիմնադրութեան Գասարան, ու առ այս զետեղեցինք նաև հանդուցեալ Հասարակական Գարակէօզեանի առևանջով յիշատակարան մը նոյն դասարանի ճակատին վեր զգածուած շնորհակալութիւններ թէ՛ կազմակերպութեան և թէ՛ մանաւանդ այս նուիրատուութիւնը կարելի դարձնող անձին, Օր. Լիլիա Գարակէօզեանին, կրթանուէր և շատ սիրուած ազնիւ հայուհիին՝ որուն մօտէն հետաքրքրութիւնը հայ կրթական գործին մեզ բոլորս երախտապարտ կը ձգէ:

Կիլիպպի Կիլիպէնկեան Հիմնադրութիւնը: — Որ տարեկան 1000 տոլարի նուիրատուութեամբ մը կը պահէ ամբողջական դասարան մը, դարձեալ կոչուած իր անունով (երկրորդական Գ. դասարան), Շնորհակալութիւն Հիմնադրութեան բոլոր կրթանուէր անդամներուն:

Համապետասիայ Վերաշինակ Միութիւնը: — Այստեղ կը յիշատակենք զիրենք մասնաւորապէս անոր համար որ թէև ցարդ մեզ չէ հասած գումարը և սակայն անցեալ դպրոցական տարեշրջանին համար արդէն իսկ խոստացած են 600 տոլարի նուիրատուութիւն մը, զոր շուտով կը ստանանք, համաձայն իրենց վերջին նամակին:

Հայ Աւանդակներու Ամերիկանայ Բարեկամներու

Միութիւնը: — Խումբ մը Ամերիկահայեր են ասոնք որոնք զխաւարութեամբ Պր. Մովսէս Մովսէսեանի կազմակերպած են Մերձաւոր Արևելքի Հայ դպրոցներու օժանդակութեան ձեռնարկ մը: Այս ձեռնարկէն մեր զպրոցը օգտուած է 236 տիւարի գումարով մը: Շնորհակալութիւն բոլորին, ինչպէս նաև իրենց Պէլքըրի թարնակ պատուոյ գործակալ Պր. ձօրն Զամիլեանին:

Օրնեալ ըլլան մեր բոլոր նուիրատուները և թող առատանան Աստուծոյ բարիքներով:

Մեր Շնորհակալութիւնը: — ա) Մանկապարտէզի շրջանաւարտներ, թիւով 60, որոնք անցեալ Կիրակի արդէն իսկ ստացան իրենց Մանկապարտէզի արտական վկայականները Զերդ Սրբազնութեանէն:

բ) Երկրորդական վարժարանէն շրջանաւարտ աշակերտներ, 8 երիտասարդ-երիտասարդուհիներ, ազնիւ, ուշիմ, ազգանուէր և բարի հոգիներ, որոնք վստահ եմ որ պիտի ըլլան մեր դպրոցին և վանքին պատիւ բերող անձնաւորութիւններ, ու հաւատարիմ պիտի մնան իրենց ազգին, մայրենի եկեղեցիին և մեր Ս. Աթոռին:

Ի վերջ Տեղեկագրիս, յանուն Ս. Թարգմանչացի վարժարանի աշակերտութեան, անոնց ձեռք նուիրուին և ուսուցչական կազմին կը յայտնենք ստուգին շնորհակալութիւն Զերդ Բարձր Սրբազնութեան, Պատ. Տնօրէն Ժողովին և Ս. Յակօբեանց Միաբանութեան, Զեր Բարձր հովանաւորութեան, գործընկերներն և անմիջական հետաքրքրութեան համար, ինչ որ մեզ բոլորիս համար եղաւ խթան աշխատանքի ու խանդավառութեան, ու խարիսխը մեր դպրոցական բոլոր նուաճում-

ներսն։ Արչափ բարեբարուած կը զգանք մենք զմեզ մասնաւորաբար Սուրբ Քաղաքի զժրոխտ այս սրերունը, երբ կը մտածենք որ Ս. Թարգմանչաց վարժարանի կրթական գործը շնորհիւ Ձեր Արքայնութեան և Ս. Աթոռիս բովանդակ Միա-

րնգունեցէք, սիրելի Արքայան Հայր, մեր սր- զիւհան սիրոյ և յարգանաց հաստատեցրէ։
Հանդէսի աւարտին, Ամեն. Արքայան Հայրը կ'ստարեց յիշատականերու և մրցանակներու բաշխումը կրկնորգական բաժնի 8 երկուս ընթա-



ՍՐՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՅՑԱԿԱՆ ԿԱՅՐ ԵՒ ՇՐՋԱՆԱԽԱՆՆԵՐ

բանութեան ոչ միայն չէ ազդուած Ս. Քաղաքիս տաղնապններէն, այլև յարատև ճիգերով կատարած է կրթական աչքառու նուաճումներ։
Մեր երախտագիտական զգացումներուն հետ

ցտարաններուն, և հանդէսը փակեց ուսանողներուն և ձեռողներուն ուղղած իր ապաստիլ յոր- զորականով ու Տէրունական աղօթքի միաբերան երգեցողութեամբ։

ՍՄԹՎԵՐՋԻ ՀՕՆԳԷՍ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ
ԵՒ
ԸՆԾՍԵՍԱՐԱՆԻ

17 Յուլիս, Հինգշաբթի երեկոյեան ժամը 7.30ին տեղի ունեցաւ Ժառանգ. վարժարանի և Ընծայարանի Ամսփերջի Հանդէսը և Մրցանակաբաշխութիւնը՝ վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ընտրեալ Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան Պատ. Միաբանութեան անգամներուն և հրատիրեակներու բազմութեան։

Հանդէսը սկսաւ «Որտե՞ր ուրտե՞ր» վարժարանի քայլերգով, որմէ ետք Ընծայարանի Սարկաւաղներէն և Ժառ. սաներէն ոճանք ըրին արտասանութիւններ՝ հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով, կարգապիս ինքնագիր շարագրութիւններ, տուին խմբերգներ՝ զեկամարութեամբ Պր. Վահէ Գալայաններին։

Հանդէսին երկրորդ մասը սկսաւ «Ով յարկ

վսեմ» երգով։ Ապա, Բար. Դաւնիկ Ալի. կարգաց խնամուած ուղերձ մը ի զիմաց վարժարանի ուսանողութեան՝ ուղղուած Ամեն. Արքայան Հօր, որմէ ետք Տեսուչ Հոգ. Տ. Թորգոմ վրդ. կարգաց վարժարանի միամեայ գործունէութեան մանրամասն տեղեկագիրը՝ զոր կուսանք ստորև։

«Ամսփերջի այս հանդէսը առիթ մըն է որպէս զի անդրադառնանք կրօնապէմի Ժառ. վարժարանի և Ընծայարանի 1957-58 շրջանի մէկ տարուան աշխատանքներուն և ձեռք բերուած արգիւնքներուն։ Այս առիթը, Աստուծոյ օրհնութիւնը կը հայցենք մեր ժողովուրդին այն զաւակներուն վրայ, որոնք իրենց նիւթական օժանդակութիւնը չեն զլանար Ժառ. վարժարանին, տարեկան իրենց կանոնաւոր նուիրատուութեամբ։

Նսանակում նոր Տեսչի և Սեպի - Տեսչի։ - վարժարանիս Տեսուչ Գեր. Տ. Հայկազուն կարգի Ս. Էջմիածին փոխադրուելու հետեանքով, վանքին համար, ինչպէս նաև համազգային տեսակէտով

կենսական այս Հաստատութիւնը՝ Ժառ. Վարժարանը, կը մնար ստանց տեսուչի: Զերդ Ամենապատուութեան 14 Սեպտեմբեր 1957 թուակիր նրամանագրին և Պատ. Տնօրէն Ժողովի որոշման համաձայն, առժամայէս ստանձնեցի Ժառ. Վարժարանի Տեսուչութիւնը, իրրև օգնական և փոխտեսուչ ունենալով Հոգ. Տ. Արիս Արեղայ Շիրվանեանը, որ Օգոստոս ամիսէն նշանակուած էր այդ պաշտօնին:

1957 Նոյեմբերին, Հոգ. Տ. Արիս Արեղ. Նրամագրով, փոխ-տեսուչ պաշտօնին նշանակուեցաւ Հոգ. Տ. Լեոն Արեղայ Արեշեանը, որ խրջնատօրէն կատարեց և կը կատարէ իր պաշտօնը, Հոգ. Տ. Արիս Արեղայի փոխ-տեսուչութեան շրջանէն հաստատուած կարգապահութիւնը շարունակելով սեսանդներու ամենօրեայ կենցաղին մէջ:

Ասուցչական կազմ: — Նոյնքան բարերախտ կը զգամ ինքզինքս, ինձի գործակից ունենալու համար դատ մը ուսուցչիներու, որոնք իրենց պաշտօնին գիտակցութեամբ, իրենց դասաւանդած նիւթերուն և աշակերտներուն հանդէպ ունեցած իրենց սէրով, և տեսութեան հետ գործակցելու իրենց պատրաստակամութեամբ, մեծապէս թեթևեցուցին տեսչին և փոխ-տեսչին ուսերուն ծանրացող թեւը:

Ժառ. Վարժարանի և Ընծայարանի ուսուցչական կազմը, բացի Զերդ Ամենապատուութեանէն, որ Ընծայարանի սեսանդներուն հաճեցաք դատաւանդել ընդ. Եկեղեցեայ Պատուութիւն և Բարար լեզու, կը բաղկանայ տասը հոգեորական և վեց աշխարհական ուսուցչիներէ: Ետքի թացառութեամբ, ուսուցչիները կանոնաւորաբար և ժամանակին ներկայ գտնուած են իրենց դասերուն: Իւրաքանչիւր դասարանի մէջ ուսուցչիներու ստորագրութեան համար գրուած ներկայութեան տեսարակէն կարելի է ստուգել ասիկա:

Ասուցչական ժողովներ: — Տարուան ընթացքին ունեցած ենք ուսուցչիներու հետ ամսական ժողովներ: Թիւսով ութը նման ժողովներու մէջ որոշումներ տրուած են աշակերտներու նիւթերու ատիճանաւորման մասին, ինչպէս նաև նկատի առնուած են իւրաքանչիւր աշակերտին աշխատասիրութեան, նկարագրին և ընդհանուր վարուելակերպին հետ կապ ունեցող հարցեր և նկատողութիւններ, ուսուցչիներուն և Տեսուչութեան կողմէ մատակնուած: Իսկ աշակերտներուն պատկանութեան տուած են որ իրենց զիտողութիւնները կատարեն ուսուցչիներու և դասաւանդութեան մասին, ներկայանալու համար գանձեք ուսուցչական ժողովներուն:

Ուսուցչական ժողովի մէջ որոշում կայացնելէ յետոյ, յայտնած են աշակերտներուն թէ իւրաքանչիւր դասաւանդութիւն համար անցման նիւթ է 60՝ հարիւրի վրայ, Նոյնը նաև ընդհանուր միջնակ, դասարան փոխելու համար: Իսկ դասաւանդութեան քաժնուած են աւագ և կրտսեր խումբերու, ըստ մեր վարժարանին մէջ անոնց ունեցած կարևորութեան: Եւ դասարանին բոլոր դասերուն տրուած բարձրագոյն թիւերուն ընդհանուր գումարը այնպէս մը կարգադրուած է որ

հասարակ 1000 թիւին: Իսկ աշակերտին առաջնութեան կարգը իր դասարանին մէջ կ'որոշուի իր շահած թիւերուն ընդհանուր գումարով: Իր դասարանին՝ և մասնաւոր դասերու մէջ յառաջակէմ աշակերտը մրցանակ կը ստանայ, եթէ սակայն իր միջինը 100ի վրայ 75 կամ աւելի է:

Բացի նոր գնուած դասագիրքերէ, սրէնսլով բարձրագրութեան դասաւանդութեան հետեւալ դասերուն. — Ս. Երկրի Պատմութիւն, Ս. Քիրք, Իմաստասիրութիւն և Աստուածաբանութիւն:

Անսական նիւթերէն դատ, աշակերտներուն տրուած են նիւթեր կրկն պաշտօնական քննութիւններու ատիճով — կրտսեան յնուութիւններ, որոնք անկի ունեցան Փետրուար 11-19, և ամառի ընթացքին թիւներ՝ Յունիս 23-Յունիս 1: Ընդհանր ընթացքով: — Ասուցչիներու հետ խորհրդակցութեանց շափ կարևոր կը նկատուի ձեռնդներու բարոյական ազդեցութիւնը իրենց դասակարգ վրայ: Եւ որովհետև մեր վարժարանը շատ իմաստուն սկզբունք մը որդեգրած է կրտսեանէն և շրջակայքէն աշակերտներ շրջաններու, սեսալ թղթակցութիւններ կատարած են աշակերտներու ձեռագց հետ, կրտսեան քննութիւններուն յետոյ անոնց զրկելով իրենց դասակարգ ամսական դասաւանդութեանց և կրտսեան քննութեանց մէջ ձեռք բերած կրթական յաջողութեան և վարք ու բարքի պատկերը: Երկրորդ նամակով պարզած են ձեռնդներուն իրենց դասակարգ նիւթական կացութիւնը, յայտնելով որ աշակերտներուն անձնական գրամը ի պահ կը գրուի փոխ-տեսչին մօտ, ելքն ու մատքը արձանագրելով ստանձնի տամարի մը մէջ, որպէսզի աշակերտները անհրաժեշտ պիտոյ ընելու համար միայն գործածեն զայն:

Բացի թղթակցութիւններէ, առիթ ունեցայ ձեռնդներէն ոմանք անձնակապ հանչնալու և խօսելու անոնց իրենց դասակարգ մասին, երբ անոնք այցելութեամբ և կամ Ս. Զատիկի առթիւ ուխտաւորաբար Երուսաղէմ գտնուեցան: Այնքան կարևոր էր և օգտակար եղաւ այս անձնական ծանօթութիւնը ձեռնդ հետ, աւելի լաւ ըմբռնելու տեսակէտէն աշակերտին նկարագրի կարգ մը զիճերը: Սուրբ Զատիկի առթիւ երուսաղէմ եկած ձեռնդները ընկալեցան վարժարանի ձեռնդներին մէջ, և Զատիկի գիշերը ունեցանք հաւաքով մը՝ ձեռնդներու և բարեկամներու ներկայութեան, ուր աշակերտները կատարեցին երգեր և արտասանութիւններ, և ես պատշաճ նկատեցի խօսիլ Ժառանգաւորաց վարժարանի և անոր նպատակի մասին:

Տակաւին, գանազան ձեռնդներու 27 նամակներ գրած են իրենց դասակարգ կապակցութեամբ, ասոնց իրրև աշակերտ ընդունուելուն և կամ վարժարանէն հեռանալուն առիթով: Իսկ բացի անկապակցական նամակներէ, գրուած երկու երկու ցաւակցական նամակներէ, գրուած երկու տարիաւորներու ընթացքին անդամներուն, ընտանիքին հօրը մահուան առիթով, տասնեմէկ վկայագրեր տրուած են զիմում կատարած հին ժառանգաւորներու և վարժարանէն տարուան ընթացքին մեկուսւած աշակերտներու:

Ուսանողութիւն: - 1957 Յունիս 1ին, ժառանգաւորաց վարժարանին մէջ ներկայ էին 25 աշակերտներ՝ չորս դասարանով, իսկ Ընծայարանին մէջ վեց սարկաւազներ՝ Ընծայարանի Ա. տարին աւարտած՝ Նոյն տարւոյ Յունիսին, Ընծայարանի Գ. և Բ. դասարաններու չորս սարկաւազները միասին արեւոյ ձեռնադրուած էին, վերակոչուելով Տ. Գաւիթի, Տ. Արիս, Տ. Լեւոն և Տ. Օհան:

Ժառանգաւորաց վարժարանի աւարտական Գ. դասարանէն երեք հոգի միայն յանձնառու եղան կուսակրօնութեան ուխտին և սարկաւազ ձեռնադրուեցան: Պատ. Տնօրէն քողովը նկատի առաւ աշակերտներու կրթական վիճակը և կարելիութիւնները, և որոշեց ժառ. վարժարանին մէջ պահել 26 աշակերտ միայն, Նախապատրաստական և Առաջին դասարաններու բաժնուած, իսկ Ընծայարանի և ուսանողներու վրայ աւելցընելով երեք նորերը, կազմել Ընծայարանի մէկ դասարան միայն:

1957 Յունիսին, Պատ. Տնօրէն ժողովի որոշումով երբ այցելեցի Սիրիոյ և Լիբանանի 30 հայ վարժարանները, ժառանգաւորաց վարժարանի համար աշակերտ ընտրելու պաշտօնով, զիման կատարած 30 աշակերտներուն մէջէն միայն հինգը յանձնարարած էի իբրև յարմարագոյնները: Ասոնցմէ զատ, ուղղակի վարժարանի Տեսչութեան զիմում կատարողներ եղած են, և 1957 Հոկտեմբեր 1ին դասաւանդութիւնները սկսուած են 26 ժառանգաւոր և 9 Սարկաւազ ուսանողներով:

Տարուան ընթացքին, այս ուսանողներէն հինգը իրենց ծնողաց մօտ զրկուեցան իբրև անկարգ կամ ուսման անատակ աշակերտներ: Իսկ ութը հոգիներ հեռացան վարժարանէն, կամ իրենց ծնողաց կարօտին շղիմանալով, կամ, ըստ իրենց, կարգապահական կենցաղը ծանր գտնելով: Ընծայարանի ուսանողներէն երեքը զրկեցին իրենց ուխտին:

Վարժարանի ներքին կեանք: - Ժառ. վարժարանի ներքին կեանքը հնչող կեանք մը չէ՝ արքուած ըլլալով որ, բացի ուսումնական պարտականութիւններէն, աշակերտները պարտաւորութիւններ ունին ժամապաշտական, Սուրբ Տեղեաց և Միաբանութեան հաւաքական կենցաղին պահանջներուն նկատմամբ:

Հոգևոր այս Հաստատութեան նպատակն է նախ ուսմունքով և նկարագրով կիրթ անհատներ պատրաստել, հաւատարմօրէն ծառայել կարենալու համար Քրիստոսի Սուրբ եկեղեցիին մէջ և հայ ժողովուրդի հոգևոր և մշակութային յառաջդիմութեան համար: Երկրորդ՝ վարժեցնել աշակերտը կարգապահութեան և օրէնքներու հնազանդութեան:

1948էն ի վեր, տնտեսական, կրթական, ներքին ու արտաքին աննպաստ պայմաններ իրենց խորունկ հետքերը թողած էին նաև ժառ. վարժարանի ներքին կեանքին վրայ, նման այգիի մը՝ որուն ցանկապատը քայքայուած, ինչպէս կ'ըսէ Սաղմոսերգուն, «Իմն զնա անցաւորք

և անապարհիւս: Սակայն Աստուծոյ ողորմութեամբ, ուսուցիչներու օժանդակութեամբ, Ընծայարանի ուսանողներու գիտակցութեամբ, ժառանգաւորաց վարժարանի աշակերտներու քարեկանցեղութեամբ, մէկ տարուան մէջ հալլի քարքարուտը կարելի եղաւ մաքրել նման պարսէլի մը:

Բարեկրթութեան կանոններ: - Անհրաժեշտ նկատեցի որոշ ծրագրով մը խօսիլ աշակերտներուն, թէ՛ սեղանատան մէջ և թէ՛ առաւօտները դասաւանդութենէ տարբ վայրկեան առաջ, բարեկրթութեան կանոններու մասին, պահանջելով աւնեց գործադրութիւնը:

Սարկաւազաց հուսալոյսներ: - Սարկաւազներու հետ Ուրբաթ գիշերներ ունեցած ենք շարժական հաւաքոյթներ, ուր մէկ կողմէ ծրագրած ենք Շարաթ գիշերներու դասախօսական և այլ երեկոյթներու յայտագիրները, և միւս կողմէ զբաղած ենք իրենց կրթութեան, կենցաղին և պարտականութիւններուն հետ կապ ունեցող խնդիրներով, և կէսական ժամ՝ արամազրած՝ օգտակար գիրքի մը ընթերցումին: Ս. Ստեփանոսի տօնակատարութեան առիթով, զեղեցիկ գաղափարը ունեցան և նուէրներ տարին հիւանդանոցներու մէջ գտնուող հայ հիւանդներուն:

Շարքորեայ երեկոյսներ: - Կազմակերպուեցան Շարքոր գիշերներու իմացական կրթանքները: Իւրաքանչիւր երեկոյթին պատասխանատու սարկաւազը պատրաստած է յայտագիրը արտասանութեանց և երգերու, և վարած է օրուան յայտագիրը, մինչ երկրորդ սարկաւազ մը ներկայացուցած է գլխաւոր նիւթը: Այսպէս, յաջորդաբար ներկայացուած են Գեորգ Գ., Մալկար Ա. և Նիբուս Ե. Աշտարակեցի կաթողիկոսներու շրջանը, և խօսած են «Արտեսի եւ Պիտութեան յարեթութիւնը» նիւթի մասին և կազմակերպած են վիճարանական երեկոյթներ, «Երկրէ թէ՛ ուր» և «Պատիժը անհրաժեշտ է դասխարակութեան մէջ» նիւթերու շուրջ:

Իսկ դասախօսական երեկոյթներու համար հրաւիրուած են հոգևորական և աշխարհական անձեր՝ որոնք խօսած են հետեւեալ նիւթերու վրայ՝

1. Կամաւոր արարներ եւ անոնց գործնական օրբառական արժէքը (Տ. Շնորհք Եպոս.) [Վրդ.]
2. Մեղանշում եւ ապաշխարութիւն (Տ. Թորոգոմ)
3. Եօրր մոլութիւններ (Տ. Ներսէս Վրդ.)
4. Գրական վերլուծում, «Առ ու ի Եր»՝ վահան թէքէեանի (Տ. Զաւէն Վրդ.)
5. Գրական վերլուծում, «Հայաստանիկն»՝ Ա. Ե. տիք Իսահակեանի (Տ. Զաւէն Վրդ.)
6. Հայ նահապետութիւնը (Տ. Կիւրեղ Վրդ.)
7. Ժառ. վարժ. պատմական (Տ. Սրբի Արդ.)
8. Խղմնագներ եւ անոր դերը կեանքին մէջ (Տ. Լեւոն Արդ.) [Օհանեան]
9. Ամերիկեան արդի գրականութիւնը (Վարուժան)
10. Եկեղեցին եւ անոր յսկանքները (Տ. Թորոգոմ Վրդ.)

Իսկ երկու անգամ խօսած եմ յանդատարատից խօսելու վարժութեան մասին, տեղւոյն վրայ ընտրուած 8-10 աշակերտներու կատարել տալով այդ վարժութիւնը, երկու երեկոյթներու

ընթացքին, գունաւոր և մտղական լայտերով լուսանկարներ ցոյց տալով Պատարապէն անը-
 բազ գլխաւոր պահերու, բացատրութիւն տուած
 եմ Պատարապի խորհուրդին մասին Այս լուսա-
 նկարները պատրաստուած են Ամերիկայի Հայց-
 նկարչացոյ երիտասարդաց կազմակերպութեան
 կողմէ՛ երկու առիթներով խօսած եմ նաև Առող-
 շապահական գրեթէ բներու մասին, նկատի առ-
 նելով մեր աշակերտներուն տարբեր և Ֆիզիքա-
 կան հասունութեան շրջանը:

Իրիմեան Հայրիկի մահուան 50ամեակին ա-
 ռիթով կազմակերպուած հրապարակային տուա-
 կատարութեան մէջ ժամանկաորաց աշակերտ-
 ները բերին իրենց մասնակցութիւնը յայտադ-
 րին իրագործման մէջ:

Գաւաւմաւուրի նուագաւորիւն: — Այս տարի բա-
 րեքախառն թիւեր ունեցանք զաշնամուր մը ու-
 նեմաւուր վարժարանիւ մէջ, նուիրուած կիկոպ-
 տանայ գաղայիներէն իօժէն Փափաղեանի կողմէ:

1958 Փետրուարի տացուած այս դաշնա-
 մուրը սպտակար եղաւ մեր աշակերտներուն, ո-
 բնցմէ 9 հոգի կանոնաւոր դասընթացքի նետե-
 լեցան, և Պր. վահէ Գալայճեանի ջանքերուն
 շնորհիւ կազմակերպեցին դաշնամուրի նուագա-
 ծախքի մասին հանդէսը, 21 Յունիս 19: Տիւն
 Իրաւեսակի ունկնդրութիւն: — Բացի Երոսպա-
 կան և եկեղեցական երաժշտութեան դասըն-
 թացքներէն, վերջին քանի մը ամիսներէ ի վեր,
 չարաթը մէկ գրչիւր, աշակերտները մտիկ կ'ընեն
 երաժշտական ձայնապնակներ, որոնք կը ներկա-
 յայնեն զատական գործերը մեծ ժողովուրդներու
 երաժշտութեան:

Աւրգան: — Իմացական կրթման քննորու կող-
 քին մեծ կ'սրբորութիւն ունի մարմնակրթանքը:
 Դժբախտաբար սակայն տարուան սկիզբէն
 կարելի չեղաւ ունենալ մարզանքի ուսուցիչ մը:
 Այս պատճառաւ աշակերտները իրենք կազ-
 մակերպեցին իրենց խաղերը, թէև ոչ զահագու-
 ցիչ կերպով, և ունեցան Յոթիթովի, Պասկէթ-
 օլի, Վոլիթօլի և Փինկ-փօնկի խաղեր:
 Մայիս ամիսէն սկսեալ, Պր. Յակոբ Մէնէշ-
 եանը բարի եղաւ չարաթը երեք անգամ վար-
 ժեցնել մեր տղաքը խմբական խաղերու:

Իսկ 1957 Հոկտեմբեր ամիսէն սկսեալ, ամէն
 առաւօտ դարձնուի սոյնտրական մասնակէն 15
 վարկեան առաջ արթննալով, այսինքն ըստ օր-
 ուան ժամը 4.30ին կամ 5ին, ուսանողները կը
 կատարեն խմբական մարզանք, իմ մասնակցու-
 թեանքս:

Պարսկալուսիւն: — Փոխ-Տեսչին հակօրո-
 թեան ներքե, աշակերտները կանոնաւորապէս
 մշակած են իրենց խմբակին յանձնուած պար-
 տէզի ածուները, որոնց ծաղիկներէն փունջեր
 կազմած, զարդարած են սրբատեղեաց մեր խո-
 բանները:

Նորագութիւն: — Երեսուածական նորագութեանց
 մէջ յիշատակութեան արժանի են վարժարանի
 ցանկապատին նորագութիւնը և երկրորդ ջրամ-
 բարի մը շինուելը, քանի որ ջուրի պակասը մեծ
 անպատեհութեանց առջև կը դնէ ուսանողու-
 թիւերը, իսկ ննջարաններու մէջ, աշակերտներու
 մահճակալներուն առջև, սոյնյատակը ծածկելու
 համար, Պէլրոթարանի վաճառականներէն Մ.
 Գալպեան ընկերութիւնը նուիրեց կանաչաւուն

ընտրութեացներ: Աշակերտներուն խաղի զգեստն
 ու կօշիկները պահելու համար 50 առանձին դա-
 բակներով երկու պահարաններ շինուեցան:

Աղագայի համար քիլոպեթի: — Վերջացնելէ
 առաջ, աւելորդ չեմ նկատեր խորհրդանշան թեան
 նրաթ հայթայթել նետեալ կէտերը: —

1. Ժառ. վարժարանը արդիւնաւորապէս ծա-
 տայիլու համար իր նպատակին, անհրաժեշտ կա-
 րիքն ունի նոր շէնքի մը, ուր նկատի առնուած
 ըլլան զատարանի, սերտողութեան, թատերական
 և երաժշտական հասարակութեան համար անհրա-
 ժեշտ դիւրութիւնները, նաև բաղնիքի, խաղե-
 բու և ննջարաններու համար կարեւոր կարգ ու
 սարքեր:

2. Նոյնչափ կարեւոր է ստուճի կանոնա-
 րութիւնը աշակերտներուն համար, որոնք առ
 հասարակ աճման տարիքի մէջ կ'ընդունուին
 վարժարանէն ներս: Այս տարի փորձը ըրինք,
 Տնօրէն ժողովի կարգադրութեամբ, նախաձայնի
 մէջ փոքրիկ փոխախառնութիւն մը մտցնելու և ընթ-
 քիքէն առաջ նուագադրու քանակով յաւելուա-
 ծական սնունդ հայթայթելու:

3. Կարեւոր է որ Ժառ. վարժարանը ընդուն-
 ուող աշակերտները ընտրուին ուսումնական նոյն
 մակարդակը ունեցող վարժարաններէ և զատա-
 րաններէ, որպէսզի զատուանդութիւնը անար-
 ցել ըլլայ ուսուցիչներու համար:

4. Ժառ. վարժարանի ուսումնական մակար-
 զակը պէտք է բարձրացնել պետական քննու-
 թեան մասնակցի կարենալու աստիճանին:

5. Թէև հայկական հաստատութիւններու մէջ
 հազիւ թէ մտաւք գտած, բայց կրթական կարե-
 ւոր հաստատութիւններու, մանաւանդ գրչիւր-
 թիկ զորոյններու մէջ, մեծ կարեւորութիւն կը
 տրուի խորհրդական ուսուցիչի մը ներկայու-
 թեան՝ որուն պաշտօնն է նետաքերքուիլ իւրա-
 քանչիւր աշակերտի կեանքով, առանձնաբար,
 դասնալով անոր խորհրդականը, աշակերտին թէ՛
 ընկերային խնդիրներուն և թէ՛ անհատական
 կենցաղի հարցերու լուծման մէջ: Տեսուչ և փոխ
 տեսուչ, իրք օրէնքի և գործադիր անձեր,
 անյարմար են խորհրդական ըլլալու:

Ահա մէկ տարուան համար Տեսչին, փոխ-
 տեսչին, ուսուցիչներուն և աշակերտներուն ա-
 ռաջադրութիւնը և ձեռք բերած արդիւնքը:
 Դիտենք թէ այս արդիւնքը հազիւ երկու սփ կը
 լեցնէ: Զայն մենք սիրով նախ կ'ընծայենք Աս-
 տուծայ, պապ մեր սիրելի սպգիրն և Ս. Յակոբ-
 եանց դարաւոր այս Հաստատութեան անձուէր
 Միաբանութեան և Զերդ Ամենապատուութեան,
 որպէսզի յանուն Աստուծոյ օրհնէք զուք Ժառ.
 վարժարանի և ընծայարանի բոլոր բնակիչներն
 ու մշակները, որոնք վստահ եղէք որ գլխակ-
 ցութիւնն ունին իրենցմէ ակնկալուածին, և
 վճարակալութիւնը՝ յառաջ կրթալու և բարձրա-
 նալու զէպիլ սցաղաթմն արփաւէտ, թէ իսկ ա-
 տիկա ըլլայ կսկածալէն և արիւննէլէն:

Տեղեկագրի ընթերցումէն ետք, Ամեն. Սրբ.
 Հայրը բաժնեց ուսման, վարքի, վարդանքի և
 պարտիզմշակութեան մէջ յայտոյ սաներուն
 մրցանակները, ու իր խրատական-փակման խօս-
 քէն ետք հանդէսը փակուեցաւ «Տէր կեցոյ» մաղ-
 թերգով և Հայր մերով՝ գրչիւրուան ժամը 9.30ին: